# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/23 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 10.11.2023թ-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/23 գնման պայմանագրում 2024 թվականի մարտի 11-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ N1 | ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2323-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/23 պայմանագրի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը լրացնել նոր վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 8.5 և 8.15 կետերը: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 10.11.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/23 գնման պայմանագրի

ք. Երևան 11.03.2024թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մուրադյանի և «Բիլդինգ կապիտալ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Ա. Մանուկյանի (այսուհետ՝ երկուսը միասին՝ Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 02.10.2023թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2323-Ն որոշումը և **ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի** կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 10.11.2023թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/23 գնման պայամանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Հաստատել Պայմանագրի 2024 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.1.2 Համաձայնագրով նախատեսված գումարի շրջանակներում աշխատանքներն իրականացնել Պայմանագրի N 2 հավելվածով հաստատված օրացուցային գրաֆիկին համապատասխան:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ք. Երևան, Հանրապետության հրապարակ

կառավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության

աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011047314

ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

________ Ա. Մկրտչյան

(ստորագրություն)

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**

Գործընկեր-1

«ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ

ք. Երևան, Հրաչյա Քոչար փ. 2/1

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570074092930100

ՀՎՀՀ 02261135

Տնօրենի ժ/պ՝

________ Ա. Մուրադյան

(ստորագրություն)

Գործընկեր-2

«Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ

ք.Երևան, Աջափնյակ, Գ-1 թաղամաս, 41/25

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570036596280100

ՀՎՀՀ 00144692

Տնօրեն՝

________ Ա. Մանուկյան

(ստորագրություն)

Հավելված
10.11.2023թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/23 գնման պայմանագրի
11.03.2024թ. կնքված N 1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Մինչև 2023թ. վճարված գումար | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45221142/11 | ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքներ | 231 300 000 | - | - | - | - | - | - | 113 337 000 | 113 337 000 | 113 337 000 | 161 910 000 | 161 910 000 | 161 910 000 | **161 910 000** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047314
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

**Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ո Ւ՝**

**Գործընկեր-1**

«ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Հրաչյա Քոչար փ. 2/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570074092930100
ՀՎՀՀ 02261135

Տնօրենի ժ/պ՝

Ա. Ստեփանյան
(ստորագրություն)

**Գործընկեր-2**

«Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ
ք.Երևան, Աջափնյակ, Գ-1 թաղամաս,41/25
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570036596280100
ՀՎՀՀ 00144692

Տնօրեն՝

Ա. Մանուկյան
(ստորագրություն)
Կ.Տ